

24 փետրվարի 2015 թ.

N 90-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ը ն ղ մ է***

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների 2015 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱՊՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների 2015 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է խթանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի պահպանումն ու վերարտադրությունը:

2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում առկա ջրավազանների ձկնային համակեցությունները (հիմնականում Սարսանգի և Մատաղիսի ջրամբարների), որտեղ նախատեսվում է իրականացնել ձկան պաշարի պահպանություն և վերարտադրություն, բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով, որոնք թույլ են տալիս խոսել դրանց յուրահատուկ լինելու մասին:

Դրանցից հիմնականներն են՝ տեսակային կազմի սակավությունը և էնդեմիկ ձկնատեսակների առկայությունը (կողակ և թեփուղ՝ ողջ ջրային տարածություններում, ինչպես նաև մուրցա և կարմրախայտ՝ հիմնականում ակունքներում)՝ ադապտացված տեսակների հետ համատեղ (մեծամասամբ ձկնաբուծարաններից 70-ական թվականների վերջին ջրամբարներ ներմուծված բավական քանակությամբ կլիմայավարժեցված Օածան և Կարաս ձկնատեսակներ): 80-ական թվականներին ձկան պաշարի պարբերաբար կերակրման հետևանքով ջրամբարների (կոնկրետ Սարսանգի) ձկնարդյունավետությունը զգալի չափով մեծացել է: Սակայն, որպես դոմինանտ, հանդես են եկել ձկների կլիմայավարժեցված տեսակները: Ներկայումս էկոլոգիական պրոցեսների հետևանքով ջրավազանների ձկնարդյունավետությունը խիստ նվազել է, որն էլ հիմնականում հանգեցրել է ջրավազանների արդյունավետության նվազմանը, մասնավորապես ձկների կերային բազայի (կենդանական պլանկտոնի և կենդանական բենթոսի): Ներկա դրությամբ դոմինանտ ձկնատեսակ կարելի է համարել Կարասը, որը ջրավազանների էկոհամակարգերի համար հղի է լուրջ հետևանքներով, քանի որ այդ ձկնատեսակը դարձել է լուրջ մրցակից էնդեմիկ ձկնատեսակների համար՝ որպես սնունդ օգտագործելով վերջիններիս ձկնկիթն ու մանրաձուկը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել համապատասխան միջոցառումներ կարաս ձկնատեսակի արդյունավետությունը նվազեցնելու և հակառակը ավելացնելու ծածանագրիների և էնդեմիկ տեսակների քանակը:

Ադապտացված տեսակների պահպանությանը զուգընթաց միաժամանակ ծրագրով նախատեսվում է նաև մուրցա և կարմրախայտ ձկնատեսակների պոպուլյացիայի պահպանություն, որոնք հազվագյուտ են մեր ջրավազաններում:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագրի իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

